



**IV ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ
«ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ»**

2018թ. մայիսի 24-27-ը, ք. Ծաղկաձոր

**ԵՐԻՏԱՍԱՐԴ ՆՈՐԱՐԱՐՆԵՐԻ ԵՎ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ**

**ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՆՈՐԱՍՈՒԾՈՒԹՅԱՆ ԵՎ ՁԵՌՆԵՐԵՑՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ**

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

ՀՀ ՍՊՈՐՏԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԳԱԱ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԵՐԵՎԱՆՈՒՄ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ

**ՀՀ ԳԱԱ Ա. ՆԱԶԱՐՈՎԻ ԱՆՎԱՆ ԵՐԿՐԱՖԻԶԻԿԱՅԻ ԵՎ ԻՆՏԵՆԵՐԱՅԻՆ
ՍԵՑՄԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

«ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԿ

«ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԻՔՍ» ՀԿ



Հարգելի գործընկերներ

Հրավիրում ենք մասնակցելու **2018թ. մայիսի 24-27-ը ք. Մաղկաձորում** կայանալիք **«Նորարարությունների կառավարում» IV միջազգային երիտասարդական գիտական դպրոցին** (այսուհետ՝ **Դպրոց**):

Դպրոցի նպատակն է նպաստել տաղանդավոր երիտասարդ գիտնականների, հետազոտողների և ուսանողների միավորմանը, աջակցել երիտասարդության նորարարական գործունեության մակարդակի և մասնագիտական իրազեկության բարձրացմանը, նրանց մոտ մտավոր գործունեության արդյունքների հիման վրա բիզնես գաղափարների ձևավորման, նորարարական նախագծման և տեխնոլոգիաների փոխանցման հմտությունների զարգացմանը:

Դպրոցի դասընթացի շրջանակներում մասնակիցները հնարավորություն կունենան ծանոթանալ բիզնես առաջարկների կազմման տեխնիկային, զարգացնել բիզնես նախագծերի արդյունավետ պլանավորման և կառավարման կարողություններ, ինչպես նաև տիրապետել մտավոր սեփականության օբյեկտների պահպանման ու կառավարման հիմնային գիտելիքներին:

Դպրոցի ծրագրով երիտասարդ մասնակիցների համար նախատեսված են դասախոսություններ, վարպետության դասեր (master class) և բիզնես խաղեր, որոնք կվարեն նորարարության մենեջմենթի, նախագծերի կառավարման և մտավոր սեփականության իրավունքների պահպանման ոլորտների հրավիրված առաջատար մասնագետներ և փորձագետներ:

Դպրոցին մասնակցության համար կարող են դիմել մինչև 35 տարեկան երիտասարդ ուսանողներ, գիտնականներ, ասպիրանտներ, գիտական աշխատողներ, սկսնակ ձեռներեցներ, ինչպես նաև նորարարական ձեռներեցությամբ հետաքրքրված այլ անձիք:

Դպրոցին մասնակցելու համար անհրաժեշտ է մինչև **2018թ. մայիսի 3-ը ներառյալ լրացնել մասնակցության էլեկտրոնային հայտը** հետևյալ հղումով՝ <https://goo.gl/forms/Giwnb31Ae750h3no1>:

Դպրոցի մասնակցության վճարը կազմում է 15 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ՝ հաշվարկված ընթացիկ փոխարժեքով: **Օրագրի իրականացման ընթացքում կացության և սննդի ծախսերը հոգում են կազմակերպիչները:**

Դպրոցի մասնակիցներին ընտրությունը կկայանա մրցութային հիմունքներով: Մրցույթի հանձնաժողովի կազմում ընդգրկված են Դպրոցի ուսումնառության գործընթացում մասնակցող դասախոսներ և հանձնաժողովի աշխատանքների կատարմանն աջակցելու նպատակով հրավիրված ոլորտային փորձագետներ: Մրցութային հանձնաժողովի կողմից հավանության արժանացած հայտատուները **մինչև սույն թվականի մայիսի 10-ը** կստանան “Նորարարությունների կառավարում” IV միջազգային երիտասարդական գիտական

դպրոցին մասնակցելու հրավեր: Հրավերը ստանալու օրվան հաջորդող 3 աշխատանքային օրվա ընթացքում անհրաժեշտ է հաստատել մասնակցության մտադրությունը՝ Դպրոցի կազմակերպիչ կազմակերպության բանկային հաշվեհամարին փոխանցելով մասնակցության վճարը և innov.youth.school@gmail.com էլեկտրոնային հասցեին ուղարկելով վճարման անդորրագրի պատճենը: Բանկային փոխանցում իրականացնելու համար անհրաժեշտ բոլոր տվյալների մասին ընտրված մասնակիցները կտեղեկացվեն առանձին տեղեկատվական նամակով:

Դպրոցի անցկացման վերաբերյալ մանրամասն տեղեկատվությանը կարելի է ծանոթանալ “Նորարարությունների կառավարում” IV միջազգային երիտասարդական գիտական դպրոցի պաշտոնական կայքից հետևյալ հասցեով՝ <https://yisango.wixsite.com/younginnovator-arm>, <https://www.facebook.com/SchoolOfAYoungInnovator/> ֆեյսբուքյան էջից, ինչպես նաև Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոնի պաշտոնական կայքից <http://innovcentre.am/> :

Մասնակիցների քանակը սահմանապակ է!